ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

Կապիտալիստական հարաբերությունները Թուրքիայում զարգանում էին խիստ անհամաչափորեն՝ ավելի արագ Եվրոպական Թուրքիայում, երկրի ծովափնյա շրջաններում և մեծ քաղաքների ու վարչական կենտրոնների շրջակայքում, չափազանց դանդաղ՝ ներքին շրջաններում և գրեթե աննկատելի՝ ֆեոդալական ու նահապետական բարքերի տիրապետության վայրերում (Քուրդիստան, արաբական տերիտորիաների որոշ մասեր)։

Այդ երևույթը, անշուշտ, պայմանավորված էր լայնածավալ երկրի բազմաթիվ ու բազմերանգ տնտեսական ձևերի գոյակցությամբ, որն ամենուրեք հանդիսացել է կապիտալիստական հարաբերությունների սկզբնավորումը և զարգացումը դանդաղեցնող գործոններից մեկը։

Թուրքիայի պատմության մեջ հատուկ նշանակություն է ունեցել նաև այն հանգամանքը, որ ֆեոդալական պետությունը, նրա կենտրոնական և տեղական օրգանները կանգնած են եղել կապիտալիզմի զարգացման ճանապարհին և ստեղծել հավելյալ բարդություններ։

Ռուս գիտնական ու ճանապարհորդ Ա. Պ. Չիխաչևը, դեռևս անցյալ դարի կեսերին նշել է, որ «Թուրքական ազգային արդյունաբերության ներկա անկումը բացատրվում է ոչ երբեք ազգաբնակչության անընդունակությամբ, այլ կառավարության հանցավոր անհոգությամբ, որը չի կարողանում արդյունաբերության մեջ աշխատանքը դարձնել շահագրգռող, կամ թեկուզ, հեռացնել այն արգելքները, որոնք խանգարում են արդյունաբերության զարգացմանը»[1]։

Ավելի քան 40 տարի անց, մեկ ուրիշ ուսումնասիրող արձանագրում է, որ «պետության օրգանները, ինչպես ֆինանսական, այնպես էլ վարչական, իրենց ենթումներով ու հարստահարություններով ուղղակի սպանում են գյուղատնտեսությունը և սնանկացնում են գյուղացուն»։ Սիրիայի և Պաղեստինի օրինակով նա ցույց է տալիս, որ բերքի ուղիղ 20%-ը վերցվում է որպես հողային հարկ։ «Հողագործությունը,— շարունակում է նա,— իր շահույթների համարյա կեսը վճարում է կառավարությանը, տարբեր հարկերի ձևով»[2]։ Այսպիսով, տնտեսության կարևոր ճյուղի զարգացումը տիրող կարգերի ու բարքերի պատճառով կասեցվում է արհեստականորեն։ Նույն միտքը, ավելի մեղմ, արտահայտել է Թուրք բուրժուական պատմաբան Էնվեր Զիա Կարալը. «Օսմանյան պետական գործիչները չունեին ժամանակակից տնտեսագիտական պատրաստություն... Նրանք չէին վարում առողջ տնտեսական քաղաքականություն»։ Ահա այս պատճառով, ըստ Կարալի, նրանք կենսական զիջումներ էին կատարում Արևմուտքի հանդեպ։ Սակայն նա ստիպված է խոստովանել, որ

---

[1] А. П. Чихаев. Великие державы и восточный вопрос, М., 1970. *էջ 104։*

[2] А. М. Беркенгейм, Современное экономическое положение Сирии и Палестины, М., 1897. *էջ 28։*

առաջադիմության և ժողովրդական խավերին տիրող տգիտությունից և մղձավանջից աղատելու դեպքում վերնախավը «կզրկվեր ժողովրդի թիկունքում հարուստ ու շքեղ կյանքով ապրելուց»[3]։

Ակադեմիկոս Գորդլևսկու կարծիքով՝ պետական օրգանների իրավունքները այնքան էին ընդարձակվել, որ նրանց վերաբերմունքը բախտորոշ էր նույնիսկ ամենափոքր հարցեր լուծելիս. օրինակ՝ «հանքը տեղից մինչև նավահանգիստ տանելու պայմանների և արժեքի խնդիրը»[4]։

Բացի ժողովրդի թալանից, վերնախավերի հարստացմանը նպաստել են Օսմանյան կայսրության գաղութներից և գրաված երկրներից ստացվող տուրքերն ու հարկերը։ Այս հանգամանքը ունեցել է իր բացասական նշանակությունը վերնախավի նեխումը խորացնելու գործում։ Այսպես օրինակ 1876 թ. կայսրության ուղղակի հպատակների թիվը 23 միլիոն էր, իսկ հարկատու երկրների ազգաբնակչության հետ միասին՝ 47 միլիոն[5]։ Եթե սկզբնական շրջանում հիշյալ եկամուտները մտնում էին պետական գանձարկղը, ապա մեզ հետաքրքրող ժամանակահատվածում դրանց մեծ մասը յուրացվում էր տարբեր պաշտոնյաների կողմից։ Ատրպետը նշում է, որ Սուլթան Աբդուլ Ազիզի հարեմի պահակախմբի պետ ալբանացի Հուսեին Ավնի փաշան միաժամանակ վարում էր 3 պաշտոն, և «որպես սադրազամ (մեծ վեզիր) ստանում 700, որպես ռազմական մինիստր՝ 500 և որպես թոփհանեի պետ՝ 350 թուրքական լիրա»[6]։

Իսկ Աբդուլ Համիդի սիրելի Զեքի փաշան միաժամանակ թոփհանեի (թընդանոթարան), զաղհանեի, վառոդարանի, փամփուշտի գործարանի, ձուլարանի, պետական կաշեգործարանի պետն էր, «ինքը կվարեր նաև զինվորական դպրոցները»։ Այդ պաշտոնների համար ոռճիկ ստանալուց բացի, «իրեն և իր մեղսակիցներուն համար ինքնանվեր բաշխիշներեն» բացի այլ գործով չէր զբաղվում[7]։

Սրանք առանձին օրինակներ չեն միայն, այլ բնորոշ երևույթ Օսմանյան կայսրության համար։ Ահա այս պատճառով տիրող խավերը ուղղակի շահագրգռված էին պահպանելու օսմանյան ֆեոդալական կայսրությունը և դեմ էին ամեն մի նորամուծության։ Թուրքական վերնախավի նման քաղաքականությունը ակտիվորեն պաշտպանում էին խոշոր տերությունները և օտարերկրյա կապիտալը, որը ամրապնդելով իր դիրքերը XIX դ. վերջին, երկիրը հասցրեց կիսագաղութային դրության։ Կապիտուլացիոն իրավունքների կողքին արտաքին հնշման հիմնական լծակ դարձան պետական պարտքերը, և ապա կոնցեսիաներն ու արտաքին առևտուրը, որոնք, սակայն, քաղաքական իմաստով կայսրությանը չհասցրին կախյալ վիճակի։ Թեև թուրքական ժամանակակից պատմաբանների մեծագույն մասը փորձում է երկրի հետամնացության գլխավոր պատճառը փնտրել օտար կապիտալի հզորության մեջ, սակայն այն պետք է որոնել, առաջին հերթին, կայսրության ներքին գործոններում։

---

3 E. Z. Karal, Osmanli tarihi, Ankara, 1956, cilt VII, էջ 255։

4 Акад. В. А. Гордлевский, Избран. соч., т. III, М., 1962, էջ 232։

5 Տե՛ս «Բազմավէպ», 1877, հ. 35, էջ 192։

6 «Русская мысль», 1908, № 8, էջ 183։

7 «Երկրի Ձայնը», 1906, № 8, էջ 10։

Հարկ է նկատել, որ Օսմանյան կայսրության բնական պայմանները և հարստությունները չափազանց նպաստավոր էին երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար։

Սակայն օսմանյան թուրքերի նվաճումների հետևանքով ստեղծված կայսրության տիրապետող թուրք ժողովուրդը տարված էր պատերազմական գործողություններով և քաղաքական ու վարչական գործունեությամբ։ Գրաված երկրների ժողովուրդները պահվել են հպատակության տակ, օգտագործելով «մոնոպոլիան զինվորական ու քաղաքացիական պաշտոններում»[8]։ Դաստիարակության նպատակը եղել է երեխաներին ետ պահել «աշխատանքից, որը կարող է նրանց հոգնեցնել»։ «Ռիսկի վախը օսմանցիների մոտ» գրքի հեղինակ Շեհաբ էդ-դին Սուլեյմանը այնուհետև գրում է. «ծնողները պատրաստում են երեխաներին չինովնիկական կարիերայի համար, այսինքն մի աշխատանքի, որը հեշտ է, ապահովված, անպատասխանատու և մեխանիկական»[9]։

Պատմաբան Ջելալ Նուրին ամփոփելով իր ժողովրդի անցած ուղին, գրում է, որ նրա համար բախտորոշ դեր կատարեցին երկու հանգամանք. «Նախ՝ մասնակցելով պատերազմների ու հաղթելով՝ նա հեշտությամբ ձեռք էր բերում մեծ քանակությամբ ապրանքներ և հարստություն՝ թշնամու երկրում։ Երկրորդ՝ հաղթանակներով հարբած արտոնյալ ժողովրդի մարտական ջոկատների համար գրավիչ չէին թվում արվեստները և արհեստները»[10]։

Տարիներ անց՝ Թուրքիայի քաղաքական խոշոր գործիչներից և հայտնի երիտթուրքական տեսաբաններից մեկը՝ Ջենաբ Շեհաբեդդինը ասել է, որ թուրք ժողովուրդը ստեղծվել է «ոչ թե մտածելու, այլ գործելու համար, որ նա իրեն վերապահել էր պատերազմներ վարելը և քաղաքական գերիշխանությունը, մյուս ասպարեզները սխալմամբ թողնելով ոչ մահմեդականներին»[11]։ Բնականորեն բանակը և զինվորականությունը եղել են ուշադրության կենտրոնում, ընդգրկելով երկրի ազգաբնակչության մոտ 20% և կլանելով բյուջեի մեկ երրորդից ավելին։ «Բուլղարները, սերբերը, հունգարները, ռումինները,— գրել է Աթաթուրքը,— լծվեցին արորին, նրանք ապահովեցին իրենց կեցությունը, ամրապնդեցին իրենց ուժերը, իսկ մեր ազգը քարշ եկավ տարբեր ֆաթիհ-գրավողների հետևից, շաշխատեց իր հայրենիքում և պարտություն կրեց նրանցից»[12]։ Ընդհանուր առմամբ ճիշտ ձևակերպված այս մտքի մեջ ակնհայտ է տիրող խավի և ժողովրդի ներկայացուցչի նվաճողական նկրտումների արտահայտությունը, երբ նա թվարկված ժողովուրդների հայրենիքը համարում է իրենը։ Այս կապակցությամբ կուզենայինք նշել բազմազգ կայսրության համար կենսական նշանակություն ունեցող ազգային քաղաքականության սխալ և տնտեսական ու քաղաքական իմաստով ավերիչ ընթացքը։ Ինչպես նկատում է Թուրքիային քաջածանոթ ռուսական գլխավոր շտաբի սպա Պ. Ա. Տամիլովը, այն ուներ «վճռական ազդեցություն՝ ոչ միայն ուրիշ տերությունների դեմ մղած պայքարի ելքի վրա, այլև, մինչև անգամ, Օսմանյան կայսրության գոյության տեսակետից»[13]։ Նշանակում է ազգային քաղաքակա-

[8] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, էջ 25։
[9] Восточный сборник, кн. II, Пг., 1916, էջ 14։
[10] Celal Nuri, Tarihi tedenniati Osmaniye, Istanbul, 1912, էջ 5։
[11] Maurice Pernot, La question turque, Paris, 1923, էջ 125—126։
[12] К. Ататюрк, Избранные произведения и речи, М., 1966, էջ 269։
[13] П. А. Томилов, Отчет о поездке по Азиатской Турции, в 1904 г., СПб., 1907, էջ 4։

նությունն այստեղ անմիջականորեն կապված է կայսրության բախտի և նրա դոյատևելու հետ։ Հանրահայտ է, որ անցյալ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության հպատակ, գլխավորապես քրիստոնյա, ժողովուրդները ապրում էին աղդերի ձևավորման պրոցես։ Վերջիններիս մոտ, բուրժուական կարգերի հաստատմանը զուգընթաց՝ տեղի էր ունենում կուլտուրական ու տնտեսական կյանքի զարգացում։ Դեռևս XIX դ. կեսերին Կ. Մարքսը նշում էր, որ «քաղաքակրթության առաջընթացի» կրողները «եղել են ոչ թե թուրքերը, այլ մյուս աղդերի ներկայացուցիչները»[14]։

Թուրքական լծի տակ գտնվող ժողովուրդները այդ տարիները գնահատել են, որպես արգելակման և նույնիսկ հետադիմության շրջան, երբ «ամառուրը ապրում էր լճացում, դյուղատնտեսությունը՝ անկում, իսկ խեղճությունը և աղքատությունը հասան սարսափելի չափերի... Արաբական երկրներում թուրքերը հաստատեցին կաշառակերություն և այլասերեցին կառավարիչներին ու ծառայողներին։ Պաշտոնները՝ գնվում և վաճառվում էին»[15]։

Ակադեմիկոս Ն. Սնեգարովը թուրքական ֆեոդալական պետությունը համարում է նվաճված ժողովուրդների «տնտեսական և կուլտուրական զարգացման ճանապարհին՝ ամենամեծ արգելքը»[16]։

Դասակարգային և սոցիալական իմաստով Վ. Ի. Լենինը աբսոլյուտիզմին ու ֆեոդալիզմին համահավասար է դասում ազգությունների ճնշումը, դրանք համարելով «միջնադարի ուժեղ մնացորդներ», որոնք «խիստ կասեցնում են հասարակական զարգացումը և պրոլետարիատի աճումը»[17]։

Չնայած բնական բարենպաստ պայմաններին, Թուրքիայում կապիտալիզմի զարգացմանը խանգարել են սուբյեկտիվ գործոնները։ Հատկապես Աբդուլ Համիդ II-ի գահակալության տարիներն, այդ տեսակետից, ամենացայտուն օրինակն են։ Պատմության հակասական, բայց տրամաբանական ընթացքը եղավ այն, որ հենց այդ ժամանակաշրջանը դարձավ Օսմանյան կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների զարգացման, ֆեոդալիզմի խորը ճգնաժամի էտապը։

Թեև տիրապետող վերնախավը և խոշոր պետությունները աշխատում էին պահպանել Ստատուս քվոն, սակայն «Թուրքիան նույնքան քիչ, որքան մնացած աշխարհը, մնում է անշարժ»[18]։ Այն զարգանում էր, խիստ դանդաղ ու անհավասար ընթացքով։ Այդ պրոցեսի ուղղակի արտահայտություններն էին Թանզիմաթի շրջանում և ավելի ուշ հրապարակված ռեֆորմները և օրենքները, որոնք հայտարարում էին սեփականության և անձի անձեռնմխելիություն, բոլոր ժողովուրդների իրավահավասարություն, արտադրողական ուժերի զարգացման անհրաժեշտություն և այլն։ Բայց օրենքների զգալի մասը կյանքում չէր իրագործվում։ Պատճառը այն էր, որ ֆեոդալական կարգերի դեմ պայքարի ղեկավարները ֆեոդալական վերնախավի առաջավոր ներկայացուցիչներն էին, որոնց նպատակն էր «փրկել կայսրությունը վերահաս կործանումից»[19]։

---

14 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Соч., т. 9, էջ 25։

15 امين سعد, Восстание арабов в XX веке, перевод с арабского, М., 1964, էջ 15—16։

16 Н. Снегаров, Турското владичество пречка за културното развитие на българския народ и другите балкански народи, София, 1958, էջ 201։

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 467։

18 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Соч., т. 9, էջ 4։

19 А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар, М.—Л., 1947, էջ 73։

Տնտեսական կյանքի ընդհանուր գնահատականը այն է, որ դեռևս XVIII դ. վերջերից սկսվում է կապիտալիստական հարաբերությունների ձևավորումը, ստեղծվում են մանուֆակտուրային ձեռնարկություններ, ապրանք-փողային հարաբերությունները խոշոր կենտրոններից և ծովափնյա քաղաքներից մուտք են գործում երկրի խորքերը։ Առանձին շրջանների միջև ստեղծվում են տնտեսական և առևտրական կապեր։ Տեղի է ունենում արտադրության որոշ կենտրոնացում և առանձին ձեռնարկությունների արտադրանքի արտահանում եվրոպական շուկաներ։

Սակայն, անցյալ դարի 30—40-ական թվականներից, մասնավորապես Ղրիմի պատերազմից հետո, տնտեսական ընդհանուր աճը կասեցվում է օտար կապիտալի ներխուժման հետևանքով, որի մրցմանը չդիմանալով տեղական արտադրությունը քայքայվում է և իր շուկան զիջում եվրոպական ցածրտրակ ապրանքներին։ Այդ երևույթը շարունակվում է մինչև 1870—1880-ական թվականները, երբ համակերպվելով նոր պայմաններին, տնտեսության բոլոր ճյուղերը սկսում են զարգացման նոր փուլ ապրել։

Գյուղատնտեսությունը ապրում է որոշակի վերելք։ Տեղի է ունենում մասնագիտացում, բերքի ապրանքային մասի աճ, տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների ընդլայնում, գյուղացիության շերտավորում։ Ամենուր նկատվում է կապիտալիստական հարաբերությունների ազդեցությունը գյուղատնտեսության վրա։ Այսպես՝ 1899 թ. հացահատիկների բերքը նախորդ տարիների համեմատությամբ տվեց զգալի աճ և կազմեց ցորենինը՝ 114,961,739, գարու, հաճարի, վարսակի, կորեկի համախառն բերքը՝ 84,027,123 փութ[20]։ 1905 թ. երկրում հավաքվել էր 111,600,900 փ. ցորեն և 210,300,000 փութ այլ հացահատիկային կուլտուրաներ[21]։ Ներքին և արտաքին շուկայի պահանջներին համապատասխան նկատվում է հիմնական գյուղատնտեսական կուլտուրաների, մրգերի, յուղատու բույսերի, համեմունքների և այլ մթերքների բերքատվության աճ։ Ըստ. Թուրքական վիճակագրական տեղեկությունների՝ Էգեյան շրջանում խաղողի բերքը 1904 թ. կազմել է 36, իսկ 1908-ին՝ 57 հազ. տոննա, թուզի արտադրությունը՝ 23 և 32 հազ. տոննա[22]։

Թուրքիայի գյուղատնտեսական արտադրանքը հետզհետե հարմարվում էր միջազգային շուկայի պահանջներին։ 1885 թ. վաճառվել է 212 կգ քունջութ (շուշմա)։ Իսկ 1896 թ. դրա արտահանությունը հասավ 8.339, և մի տարի անց՝ 12,653 կգ։ Շուշման «տեղական պետքերու համար ալ մեծ սպառում ունի... Պիտի չսխալինք երբ արտածվածին չափ ալ տեղական սպառում մը գնահատենք»[23]։

Ավելանում է անասունների առևտուրը, որը հետևանք էր նահապետական ու ֆեոդալական կարգերի հիմնական օջախներ հանդիսացող անասնապահական գլխավոր շրջաններ ապրանքադրամական հարաբերությունների ներթափանցման։ Թուրքիայի միայն ասիական մասում, մոտավոր հաշվումներով, դարասկզբին կար 45 մլն. գլուխ ոչխար, 16 մլն. այծ և 3 մլն. խոշոր եղջերա-

---

20 АВПР, Новый турецкий стол, д. 3701, л. 6.

21 Турецкий сборник, под ред. Г. М. Бикермана, СПб, 1909, էջ 143։

22 Ystatistik yilligi, 1934—1935, cilt VII, էջ 333։

23 «Բյուրակն», 1906, № 41, էջ 971։

վոր անասուն[24]։ Անասունների առևտրով զբաղվում էին մեծ մասամբ մահմեդականները։ Քրդերը գարնանը 10—15 ղուրուշով ձեռք էին բերում դառներ, մեծացնում և 80—100 ղուրուշով վաճառում հալեպցի վաճառականներին[25]։ Գնված ոչխարներից կազմվում էին հոտեր, որոնք Տրապիզոնի, Սամսոնի, Հալեպի, երբեմն էլ Յաֆայի վրայով տեղափոխվում էին Եվրոպա կամ Եգիպտոս[26]։

Զուգահեռաբար աճում էր բրդի և կաշիների վաճառքը։ 1905—1906 թթ. արտահանվել է մոտ 51 մլն. ղուրուշ արժողությամբ ավելի քան 13 մլն. կգ բուրդ, իսկ 1910 թ. վաճառվածի արժեքը հասել է 131 մլն. ղուրուշի[27]։ Նույն տարիներին արտահանվել է համապատասխանաբար 60 և 77 մլն. ղուրուշի կաշի։ Սա ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրության գյուղատնտեսությունը գտնվելով ֆեոդալիզմի պայմաններում, անցյալ դարի վերջերին լրջորեն ներգրավվել էր ապրանք-փողային հարաբերությունների ոլորտը։

Թուրքիայում կապիտալիզմի զարգացման կարևոր նախադրյալ էր նաև հաղորդակցության միջոցների զարգացումը։ Ընդառաջելով ժամանակի հրամայական պահանջներին, կառավարությունը ավելի քան 30 տարիների ընթացքում կառուցում է 22 հազար կմ ցամաքային ճանապարհներ[28]։ Նույն ժամանակահատվածում զգալիորեն աճում է նավատորմը։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կայսրությունը ուներ 300 առագաստանավ և, Եգիպտոսի հետ միասին՝ 33 շոգենավ, որոնք չափազանց հնացած էին և հաճախ իրենց նպատակին չէին համապատասխանում[29], իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին՝ 879 առագաստանավ և 104 շոգենավ, 241,472 տոննա ընդհանուր տարողությամբ։

Աճում էր նավագնացությունը. այսպես 1900 թ. Կոստանդնուպոլսի նավահանգիստ է մտել 14,391 նավ մոտ 10,5 մլն. տոննա տարողությամբ, իսկ 1910 թ. 20,297 նավ ավելի քան 19 մլն. տոննա տարողությամբ[30]։

Ավելի մեծ տնտեսական նշանակություն ուներ երկաթուղիների շինարարությունը, որը 1856 թ. սկսած կատարվեց հիմնականում եվրոպական կապիտալի միջոցով։ Ինչպես նշում է Ա. Խ. Սաֆրաստյանը՝ կառուցվող երկաթգծերը հանդիսանում էին «անգլիական և ֆրանսիական նավային երթուղիների շարունակությունը թուրքական տերիտորիայի վրա։ Սրանց կառուցման նպատակը եղել է անգլիական ու ֆրանսիական ապրանքների ներմուծման ապահովումը Թուրքիայի ծովափնյա շրջանները և թուրքական ճումքի արտածումը»[31]։ Երկաթուղային շինարարության սկզբից մինչև կայսրության անկումը, այսինքն 62 տարվա ընթացքում, Թուրքիայի ժամանակակից տերիտորիայի վրա կառուցվել է 4100 կմ երկաթուղագիծ[32], այսինքն տարեկան՝ 50 կմ։ Այս թվերը

---

24 Նույն տեղում, 1907, № 5—6, էջ 113։

25 Տե՛ս «Արտքս», 1889, գիրք Ա, էջ 12։

26 Է. Նուման, էրզերում, Թիֆլիս, 1896, էջ 30։

27 М. В. Кечеджи-Шапованов, Экономическая Турция, Пг., 1915, էջ 8։

28 Խանչյան, Աշխարհագրություն Օսմանյան պետության, Կ. Պոլիս, 1912, էջ 165։

29 Տե՛ս «Բազմավեպ», 1878, հ. 36, էջ 199։

30 Hüseyin Avni, Bir yarım mustemleke oluş tarihi, Istanbul, 1932, էջ 56։

31 А. Х. Сафрастян, Размещение и развитие железных дорог Турции (рукопись диссертации), Ереван, 1948, էջ 29։

32 Б. Даркот, География Турции, М., 1959, էջ 155։

չափազանց խոսուն են թե՛ եվրոպական պետությունների քաղաքականության և թե՛ կապիտալիստական հարաբերությունների զարգացման աստիճանի առումով։

Վ. Ի. Լենինի հաշվառումներով՝ 1890 թ. մինչև 1913 թ. երկաթուղային ցանցը Հնդկաստանում աճել է 2 անգամ, իսկ Փոքր Ասիայում՝ 7 անգամ[33]։

Մարքսը նկատել է, որ թույլ զարգացած երկրներում երկաթուղային շինարարությունը «արագացնում է սոցիալական ու քաղաքական սահմանազատումը»[34]։ Կարևորն այն է, որ երկաթուղին մտնում է կենցաղ և որոշ շրջանների հետագա զարգացումը պայմանավորում իր գործունեությամբ։ Այսպես, երկրի համար կենսական նշանակություն ունեցող Հայդար փաշա—Անկարա գծի օգտագործման ինտենսիվությունը շարունակ մեծանում է։

Թվականը	գծի երկար. կմ	ընկերությանը տրվող կիլոմետրային գարանտիայի գումարը (ֆրանկ)	տեղափոխումները ուղևորն.	բեռ. տոննա
1889	92	8,444	650,189	14,912
1890	116	9,872	629,351	53,229
1895	578	6,177	973,189	91,956
1900	578	9,503	1,125,932	232,353[35]

Իսկ 1911 թ. տեղափոխված ուղևորների թիվը հասել էր 2,709,276 մարդու, բեռներինը՝ 425,027 տոննայի[36]։ 1874 թ. Թուրքիան մտնում է միջազգային փոստային միության մեջ, այդուհանդերձ՝ երկար ժամանակ նամակները բաց էին ընդունվում և բաժանմունքներում ստուգվում։ 1897 թ. երբ բացահայտվեց, որ առաքվում են պրոկլամացիաներ, մայրաքաղաքի փոստը փակվեց։ Այնուամենայնիվ, կապի ցանցը հետզհետե աճում էր և 1908 թ. երկրում գոյություն ունեին 1024 կապի կայաններ և ավելի քան 188 հազար կմ հեռախոսագծեր։ Կապի ցանցի ընդլայնմանը, Աբդուլ Համիդի կարգերից բացի, խանգարում էր 1880-ական թվականներին եվրոպական պետությունների ստեղծած ինքնուրույն փոստերը։

Վերոհիշյալ հանգամանքները, թերություններով հանդերձ, հետզհետե ամրապնդում էին առևտրական բուրժուազիայի դիրքերը և կառավարության վրա ճնշում գործադրելու հնարավորությունները, որը որոշ հարցերում տեղի էր տալիս։ Երկարատև պայքարի հետևանքով 1900 թ. բոլորովին վերացան ներքին մաքսային տուրքերը, որը և կարևոր դեր խաղաց կապիտալիստական տարրերի և ներքին շուկայի ձևավորման գործում։

Անցյալ դարի վերջին տասնամյակներում սկսել էին ձևավորվել առևտրական ընկերություններ և մշակվել էր դրանց կանոնադրությունը։ Թուրքական պայմաններին հարմարեցրած եվրոպական միավորման այս ձևերը տվեցին իրենց արդյունքները թե՛ առևտրի և թե՛ արդյունաբերության մեջ։ 1906—

---

33 Տե՛ս В. И. Ленин, ПСС, т. 28, էջ 470—473։

34 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 34, էջ 291։

35 Pech F., Manuel des sociètès Anonymes fonctionant en Turquie, Paris, 1911, էջ 34։

36 А. Д. Новичев, Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, էջ 276։

1907 թթ. Իզմիրում և Ուշակում կազմակերպվեցին գորգ արտադրողների ու վաճառողների ընկերություններ, Բուրսայում՝ մետաքսի, Ադաբազարում՝ առևտրական մեծ տների երկու ընկերություններ և այլն։ Խոշոր քաղաքներում կազմակերպվում են առևտրական պալատներ և դատարաններ։ Տեղի է ունենում վաճառատների ու քաղաքների մասնագիտացում։

Փոքրիկ Բալըքեսիր քաղաքը արտադրում է արա կոչվող հաստ գործվածքը, որը գնում էին Բուրսայի, Դարդանելի, Ռոդոստոյի և Իզմիրի վաճառականները։ Խարբերդը՝ Այնթապից և Դիարբեքիրից ստանում էր մանուսա, իսկ մետաքսի գործվածքներ՝ Դիարբեքիրից ու Հալեպից։ Սեբաստիան արտադրում է տարեկան 60,000 զույգ բրդյա գուլպաներ, որոնք ուղարկվում են Հալեպ, Դիարբեքիր, Այնթապ։ Անմշակ կաշին Հալեպից գնում էին Ուրֆայի, Դիարբեքիրի, Մուշի, Մալաթիայի, Սեվիրեկի, Բալուլի, Արաբկիրի և այլ քաղաքների առևտրականները[37]։

Ներքին գավառների հաշվին աճում է որոշ կենտրոնների ու քաղաքների ընակչությունը. «12 մեծ քաղաքների ազգաբնակչությունը պակասել էր 304,000 մարդուց, մինչև 256,213-ի, այսինքն 15,7%։ Նույն քանակությամբ ծովափնյա խոշոր քաղաքների ազգաբնակչությունը ավելացել էր՝ 1,196,000 մինչև 1,350,267 մարդու, կամ 12,5%, իսկ առանց Կ. Պոլսի՝ 305,000-ից մինչև 476,702 մարդու, այսինքն 56%-ով»[38]։ Տեղի է ունենում մինչ այդ Պոլսում գտնվող խոշորագույն առևտրական ֆիրմաների ու տների որոշ ապակենտրոնացում։ Դրանք տեղադրվում են նաև Իզմիրում, Բեյրութում, Տրապիզոնում և այլ ծովեզրյա քաղաքներում, որի հետևանքով տեղական առևտրականների մի մասը եվրոպական ապրանքներ գնելու համար այլևս չէր գնում մայրաքաղաք։ Մըրմրյանը գրում է, որ խոշոր վաճառականների կողքին գործում էր «Սրկրորդական վաճառողների խումբ մը՝ Օտանի ըսված, որոնց ձեռն էր հատերով վաճառելը տեղացի և գավառացի վաճառող էսնեֆներուն»։ Սակայն սրանք իրենց այս արտոնությունը կորցրին, երբ ուժեղացավ մրցումը և երբ 1880 թ. «մեծ վաճառականք ալ սկսան հատերով բաց վաճառել ու այսպես ստանիությունը, որ բանուկ ու զատ արհեստ մըն էր հրապարակին միշակ դրամագլուխի և միջասահման կարողության տեր անձերու մեջ, հետզհետե նեղացավ և անհետ եղավ՝ մեծ վաճառականներու ագահության և շահագիության պատճառով»[39]։

Մրցման ուժեղացումը և վերոբերյալ իրողությունը հետևանք էր ներքին առևտրի շահույթի տոկոսի բարձր լինելու և տեղերի հետ կապվելու ցանկության։ Այսպես, եթե օտար կապիտալը ներկայացնող «Օրոսդի բաք» ընկերությունը իր փայատերերին 1899 թ. մինչև 1914 թ. կարողացել է տալ 10—14%-ի շահույթ[40], ապա ներքին շրջաններում (Բիթլիս, Խարբերդ, Խնուս, Բըղի և այլն) առևտրական շահի տոկոսը «տատանվում էր 75-ի և 100-ի միջև։ Ավելի մեծ շահույթ էր բերում, գլխավորապես, արտահանվող՝ ոչխարի, բրդի և այլ ապրանքների առևտուրը...»[41]։ Այսպիսով՝ ներքին առևտուրը

37 Տե՛ս «Բյուրակն», 1907, №№ 3—4, 25, 26, 39։

38 А. Д. Новичев, նշվ. աշխ., էջ 117։

39 Թուրքահայոց հին վաճառականությունն և վաճառականք, 1740—1890, գրեց Ե. Գ. Մ ը ր մ ը ր յ ա ն, Կ. Պոլիս, 1908, էջ 34։

40 Артур Руппин, Современная Сирия и Палестина, 1919, էջ 167:

41 ЦГВИА, ф. 82, оп. 24, д. 3049, л. 115.

անցյալ դարի վերջերին հասնում է այնպիսի մակարդակի, երբ անհրաժեշտաբար տեղի է ունենում «արտադրության նոր բաժանում առանձին քաղաքների միջև, որոնցից ամեն մեկը անցնում է արդյունաբերության մի որևէ գերիշխող ճյուղի շահագործմանը»[42]։ Օսմանյան կայսրության արդյունաբերությունը և արհեստները, ինչպես նշվեց, անցյալ դարի կեսերին ապրեցին լուրջ ճգնաժամ։ Ջդիմանալով եվրոպական ապրանքների մրցմանը, քայքայվեցին տեղական արհեստները։ Բայց ճահճացում տեղի չունեցավ։ Երկու-երեք տասնամյակ անհրաժեշտ եղավ, որպեսզի արտադրությունը համակերպվեր երկրի կիսագաղութային վիճակին և սկսվեր զարգացման նոր փուլ։ Սակայն եղան բնագավառներ, որոնց վրա օտար կապիտալը ազդեցություն չունեցավ։ Դրանք տեղական պետքերի համար արտադրվող յուրահատուկ ապրանքներն էին և արտադրության այն ճյուղերը, որոնցում առկա էր պետության շահը։ Արտաքին մրցումը չազդեց մասսայական յուրացման ապրանքների և տեղափոխման ոչ ենթակա մթերքների արտադրության վրա (մորթիներ, բոժոժ, ձիթապտուղ, խաղող, մրգեր և այլն)։ Ապահովված էին նաև արտադրության այն ճյուղերը, որոնք արտահանության համար էին աշխատում։

Բնական հարստությունների շահագործումը բոլորովին չէր համապատասխանում եղած հնարավորություններին։ Դրանք, թուրքական օրենքներով, կարող էին պատկանել միայն թուրքահպատակ անձնավորությունների կամ ընկերությունների։ Սակայն տեղական և օտար կապիտալը վերջիններիս անունով արդյունահանում էր էրեյլիում՝ քարածուխ, Քեբան-Մադենում և Արզանա-Մադենում՝ պղինձ, արծաթ, արճիճ, այլուր՝ խրոմ, բորացիդներ, ծովափրփուր կոչված քարը և այլն։

Լեռնային արդյունաբերությունը որոշակի դեր է խաղում երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացման և բանվորական խոշոր կոլեկտիվներ ստեղծելու ասպարեզում։ Երկրի արդյունաբերության մեջ նշանակություն են ունեցել պետական ձեռնարկությունները, որոնք մինչև առաջին համաշխարհային պատերազմը, մոտ մեկ դար, բանակի համար արտադրել են զենք ու հանդերձանք։ 1830-ական թվականներից կառուցվել կամ ընդլայնվել են՝ նավաշինարանը, պողպատի գործարանի զինանոցը, չուգունի և բրոնզի ձուլարանները, զրահաշինական և երկաթագործական, մեխանիկական և այլ գործարաններ, որոնք ապահովված են եղել ինժեներա-տեխնիկական կադրերով և ավելի քան 3000 որակյալ բանվորներով[43]։

XIX դ. երկրորդ կեսին երկրում մեծ թափ ստացան խալու և մետաքսի արտադրությունները։ Դարի առաջին կեսին գորգ արտադրվում էր 3 խոշոր կենտրոններում, 70—75 տարի հետո՝ 25։ Նույն աղբյուրների տվյալներով՝ գորգի արտադրությունը 50—70 հազ. քառ. մետրից[44] հասավ տարեկան 367,875-ի[45]։ Դարասկզբին այդ արտադրության մեջ աշխատում էին ավելի քան 20 հազար դաղգահ և մոտ երկու անգամ ավելի բանվորներ։ Նիկդեի, Կոնիայի ու այլ գործարանների կոլեկտիվները ընդգրկում էին 200—500 բանվոր[46]։ Հետագա կենտրոնացումը հասցրեց մի քանի խոշոր առևարա-արդյու-

---

[42] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, էջ 53։

[43] ЦГВИА, ф. 401, оп. 1890, д. 3, г. 53—56.

[44] Տես А. Д. Новичев, նշվ. աշխ., էջ 270։

[45] Vital Cuinet, La Turquie d'Asie, Paris, t. III, 1897, էջ 408։

[46] Annuaire Oriental, Constantinopole, 1912, էջ 1486, 1687։

նարերական ընկերությունների ձևավորմանը։ Ըստ Օրհան Գոնկերի՝ երկրում ստեղծվել էին գորդի 7 ընկերություններ, որոնցից 4-ը՝ տեղական, երկուսը՝ բրիտանական և մեկը՝ ամերիկական[47]։ Ն. Շավրովը ցույց է տալիս, որ 1901 թ. Բուրսայից—Իզմիր ընկած մետաքսագործական հիմնական շրջաններում կային 96 ձեռնարկություններ՝ 5000 կարժերով (կոճերով), իսկ 1907-ին արդեն 165—9200 կարժերով։ Ամբողջ Թուրքիայում նա հաշվել է 310 ֆաբրիկա և արհեստանոց, «20,000 կարժերով, որոնց վրա կարելի էր փաթաթել 985 հազար կգ կամ մոտ 61,5—62 հազար փութ մետաքս»[48]։ Նա մետաքսի արտադրությունը համարում է եվրոպական արդյունաբերության մակարդակին բարձրացված բնագավառ։

Հետևհետե կարևոր նշանակություն են ձեռք բերում ջուլհակությունը, կաշեգործությունը, դերձակությունը, կահույքագործությունը, մետաղագործությունը, մրդերի և այլ մթերքների մշակումը և ուրիշ շատ արտադրություններ։ Արհեստները սկսում են զարգանալ ոչ միայն տեղական նյութի աճող օգտագործմամբ։ Ձեռնարկությունների «փոքր մասը բանում էր տեղական, իսկ մեծ մասը՝ արտասահմանից ներմուծված հումքով, գլխավորապես թելով ու մանվածքով»[49]։

Թուրքիայում, հիշյալ ժամանակաշրջանում, տեղի է ունենում առևտրական կապիտալի որոշ հոսք արդյունաբերության մեջ։ Ամփոփ տվյալների բացակայությունը ստիպում է բերել առանձին օրինակներ միայն. Կեսարիայում 18 առևտրականներ միաժամանակ ձեռնարկատերեր էին, որոնցից 3-ը միավորվել էին ընկերության մեջ, 7-ը կառուցում էին ֆաբրիկաներ, իսկ 8-ը ուներ առանձին ձեռնարկություններ։ Իզմիրի երեք խոշոր վաճառականներ կազմակերպել էին շտապելային քաթանի արտադրություն։

Ամասիայում նույն մարդը կառուցել է գուլպայի գործարան, մասնագիտացված խանութ և այլն[50]։ Հին արհեստների ու մասնագիտությունների կողքին քաղաքներում կային արդեն մեխանիկներ, էլեկտրիկներ, տպագրիչներ, բիմիկոսներ ու այլ մասնագիտությունների ներկայացուցիչներ՝ ինժեներներ, տեխնիկներ և այլն։ 1880-ական թվականներից մամուլում բարձրանում է մասնագիտական կրթության անհրաժեշտության խնդիրը։

Կարևոր ցուցանիշ է բանվորության աճը։ Թուրքական ոչ լրիվ վիճակագրական տվյալների համաձայն՝ 10—20 և ավելի բանվոր ունեցող գործարանների թիվը 1913 թ. կազմել է 269, իսկ բանվորներինը՝ 16,309[51]։

Այսպիսով XX դ. սկզբին Օսմանյան կայսրության բուրժուազիան, որի մեծ մասը կազմում էր ոչ-թուրք տարրը, թույլ էր։ Այդ դասակարգը քաղաքականապես, սոցիալական իր պահանջներով բավական պասիվ էր։ Ահա այս իմաստով ճիշտ է այն միտքը, որ «գավառահայ ազգային բուրժուազիան» և ընդհանրապես գավառների բուրժուազիան ու մանրբուրժուական դեմոկրա-

---

47 Orhan Conker, Redressement economique et l'industrialisation de la Nouvelle Turquie, Paris, 1937, էջ 96։

48 Н. И. Шавров, Шелководство и шелковая промышленность в Турции, ч. I, Тифлис. 1907, էջ 240։

49 Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965, էջ 189։

50 «Բյուրակն», 1907, № 13—14, 19—20, 21։

51 А. Д. Новичев, նշվ. աշխ., էջ 51։

տիան ամենից շատ տուժելով տիրող կարգերից և ազգային քաղաքականությունից, շատ ավելի ակտիվ էին ու գործունյա և հանդես էին գալիս որպես ազատագրական պայքարի ղեկավար ուժ[52]։ Շատ ավելի թույլ և անկազմակերպ էր, իհարկե, բանվոր դասակարգը, որի հիմքը ոչ-թուրք հողազուրկ գյուղացիությունն էր, դեռևս բավական հեռու դասակարգային ընդհանուր շահերը հասկանալուց, սակայն արդեն տնտեսական պահանջների համար միասնական պայքարի պատրաստ։

Արդ՝ որո՞նք են Օսմանյան կայսրության հետամնացության հիմնական պատճառները, երբ երկրի բնական հարստությունները, առևտրի և արդյունաբերության զարգացման հնարավորությունները, աշխարհագրական դիրքը և այլ հանգամանքներ հիանալի նախադրյալներ էին ստեղծում երկրի առաջընթացի, կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար։ Ամենից հիմնական պատճառը ֆեոդալական բազմազգ պետության ու նրա վերնախավի փայփայած կարգերն էին, որոնք ուղղակի խոչընդոտում էին երկրի տնտեսության զարգացմանը։ Հարկային սիստեմը, տիրող կամայականությունը, պետական ամբողջ ապարատի կաշառակերությունը, անօրինականությունը, սեփականության և անձի անապահովությունը և այս բոլորի հետ սուլթան Աբդուլ Համիդի ստեղծած ռեժիմը խաղացին բախտորոշ բացասական դեր։

Թուրքերի ծագման պրոբլեմին նվիրված իր աշխատության մեջ Դ. Երեմեևը ուղղակի գրում է, որ նոր հասարակարգի ձևավորման դանդաղ ու հիվանդագին ընթացքը բացատրվում է սուլթանական կառավարության և տեղական փաշաների կամայականության հետևանքով անձի և մասնավոր սեփականության անապահովությամբ, որը «հանդիսանում է ամենավճռական արգելքը»[53]։

Թուրքական կարգերի՝ պետական, քաղաքական, կրոնական, ազգային և գաղափարախոսական-հետադիմական գծերը միասին վերցրած չափազանց լուրջ նյութական գործոն էին երկրի ընդհանուր առաջընթացի ճանապարհին։

Երկրորդ կարևոր ու արգելակող հանգամանքը՝ երկրի կիսագաղութային վիճակն էր, օտար կապիտալի ճնշումը, թալանը և հարստահարությունները։

О НЕКОТОРЫХ ПРЕДПОСЫЛКАХ РАЗВИТИЯ КАПИТАЛИЗМА В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

О. Г. ИНДЖИКЯН

Резюме

Вопросы экономического развития Османской империи второй половины 19 и начала 20 вв. находят в литературе различное отражение. Турецкие первоисточники обвиняют в отсталости своей страны, главным образом, иностранный капитал. Конкретные примеры из области сель-

---

52 Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական վիճակը և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967, էջ 340։

53 Д. Е. Еремеев, Этногенез турок, М., 1971, էջ 176։

ского хозяйства, промышленного производства и торговли Турции свидетельствуют о том, что главным тормозящим фактором является господствующий строй, паразитизм феодальной верхушки, её произвол, разорение имущих слоев христианских народов.

Экономическая политика турецкого правительства, национальные и религиозные ограничения в условиях султанской Турции стали материальной силой, препятствующей прогрессу страны, которому мешало и превращение империи в полуколонию.

Несмотря на указанные серьезные препятствия, в Турции происходил медленный рост сил капиталистического общества.